ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 1-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 2-Ն որոշման նախաբանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին կատարված հղումը սխալ է: Հղումը կատարվել է ուժը կորցրած ճանաչված իրավական ակտին: Անհրաժեշտ է հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին:

Որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը: Բացի այդ, որոշման եկամտային և ծախսային մասերում փոփոխությունները թերի են կատարված:

Որոշման եկամտային մասում 1-ին կետի «բ» ենթակետից հետո լրացնել նոր՝ «գ» ենթակետ, հետևյալ խմբագրությամբ.

«գ» «Ընդամենը եկամուտներ» տողի «6403.9» թիվը փոխարինել «6447.0» թվով:

Որոշման ծախսային մասում 3-րդ կետի «բ» ենթակետից հետո լրացնել նոր՝ «գ», «դ», «ե», «զ» ենթակետեր՝ հետևյալ խմբագրություններով.

««գ» Ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարչական սարքավորումներ» 5122 հոդվածի և ծախսերի գործառնական դասակարգման «Բաժին 01, խումբ 1, դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)բաժնի «0.0» թիվը փոխարինել «21.6» թվով:

«դ» «Ընդամենը ֆոնդային բյուջե» տողի «0.0» թիվը փոխարինել «21.6» թվով:

«ե» «Ընդամենը վարչական բյուջե» տողի «6403.9» թիվը փոխարինել «6447.0» թվով:

«զ» «Ընդամենը բյուջե» տողի «6403.9» թիվը փոխարինել «6468.6» թվով»:

Թիվ 1-Ա /համայնքի ղեկավարի/ որոշման նախաբանում կատարված հղումը թերի է: Անհրաժեշտ է հղում կատարել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածի դրույթներին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասար համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 31-Ն որոշմանը:

Որոշմամբ հաստատված հավելվածի վերևի աջ անկյունում նշված «1» թիվը հանել: Հավելվածի եկամտային մասում «Ընդամենը հարկային եկամուտներ» տողի «1-ին եռամսյակ» սյունակի «509.9» թիվը փոխարինել «505.9» թվով, «Դոտացիա» և «Ընդամենը պետության կողմից հատկացված դոտացիաներ» տողերի «1-ին եռամսյակ» սյունակի «884.0» թիվը՝ «884.1» թվով, «Վարձակալական հող» տողի «1-ին եռամսյակ» սյունակի «210.5» թիվը՝ «210.0» թվով, «Ընդամենը հարկվող վճարներ» տողի «1-ին եռամսյակ» սյունակի «245.5» թիվը՝ «245.0» թվով: Հավելվածի ծախսային մասում «Էլեկտրաէներգիա» տողի «1-ին եռամսյակ» և «3-րդ եռամսյակ» սյունակներում նշված «60.0» և «80.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «50.0» և «70.0» թվերով, «Կոմունալ ծառայություն»

տողի «3-րդ եռամսյակ» սյունակի «100.0» թիվը՝ «105.0» թվով, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տողի «1-ին եռամսյակ» սյունակի «90.0» թիվը՝ «80.0» թվով, «Գրասենյակային պիտույքներ» տողի «3-րդ եռամսյակ» սյունակի «40.0» թիվը՝ «35.0» թվով: Ծախսային մասում «Ընդամենը» բառից հետո լրացնել «վարչական մաս» բառերը: Ծախսային մասում «Ընդամենը» տողից հետո լրացնել նոր՝ «11.Վարչական սարքավորումներ» տող և «Ընդամենը», «1-ին եռամսյակ», «2-րդ եռամսյակ», «3-րդ եռամսյակ» և «4-րդ եռամսյակ» սյունակներում համապատասխանաբար լրացնել «21.6» թիվը: «11.Վարչական սարքավորումներ» տողից հետո լրացնել «Ընդամենը» տողը և «Ընդամենը», «1-ին եռամսյակ», «2-րդ եռամսյակ», «3-րդ եռամսյակ» և «4-րդ եռամսյակ» սյունակներում համապատասխանաբար լրացնել «6468.6», «1656.6», «3276.6», «4901.6» և «6468.6» թվերը: Հավելվածում համայնքի ղեկավարի եռամսյա համամասնությունները ծախսային մասով՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի ու դասերի անվանումներով ներկայացված չեն: Բացի այդ, որոշմամբ հաստատված հավելվածում կիրառված բառերն անհրաժեշտ է գրառել ամբողջությամբ:

Կատարող՝Ն.Մարտիրոսյան
10.03.2020թ.